Արձանագրություն N 2-1

ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-24/1 ծածկագրով Երևան քաղաքի Թևոսյան փողոցի N4 հասցեում նոր ավտոկայանատեղիի կառուցման, առկա շինության վերակառուցման/հիմնանորոգման, տարածքի բարեկարգման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան 26.04.2024թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Աշ. Գրիգորյան

Անդամներ՝ Ն. Փինաչյան
Ա. Հյուսիսյան
Հ. Գինովյան
Հ. Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Նիկոլայան

Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ Հ. Մնացականյանը

1. Գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Աշ. Գրիգորյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով 2024 թվականի ապրիլի 26-ին ժամը 11:00-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը, հեռախոս, էլ. փոստի հասցեն	Գնման գին	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	Էն Շին ՍՊԸ և Դիսի-Տելեկքոմ ՍՊԸ կոնսորցիում	ք. Երևան, Անտառային 170, haykavagyan@hotmail.com, 093 70 00 01	629 364 180	447 500 000	89 500 000	537 000 000
2	ԷՄՕՇԻՆ ՍՊԸ	ք. Երևան, Ավան 10 փ, տուն 1, emilbznuni0@gmail.com, 093 72 02 52		492 279 540	98 455 908	590 735 448

3	ԱԼ ԵՎ ԱՐ ՍՊԸ, ԷԼԳԱՆՈ ՍՊԸ և ՎԱՆՅԱՆ և ՀՈՎՍԵՓՅԱՆ ՍՊԸ կոնսորցիում	ք. Երևան, Նուբարաշեն 20փ,20/1, բն.6, arsho_grigoryan@mail.ru, 095 53 22 01	629 364 180	499 166 600	99 833 320	598 999 920
4	ԱԳԱԹ-777 ՍՊԸ	ք. Երևան, Շիրակի փակուղի 4, agat-777llc@mail.ru, 094 94 85 84		499 174 235	99 834 847	599 009 082
5	Բիդեք ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Սասունցի Դավիթ 87ա bedeck.llc@mail.ru,, info@bedeck.am, 099 10 00 74		503 491 336	100 698 267	604 189 603

Մասնակիցները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

2. Գնման ընթացակարգի հայտերի գնահատման մասին

(Աշ. Գրիգորյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց մասնակիցների հայտերի գնահատման նիստ հրավիրել 2024 թվականի մայիսի 13-ին ժամը 11:30-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ ---------- Աշ. Գրիգորյան

Անդամներ՝ ---------- Ն. Փինաչյան

---------- Ա. Հյուսիսյան

---------- Հ. Գինովյան

---------- Հ. Հարությունյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Նիկոլայան